

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Դրուքիսները, որոնք ես չեմ դարձուիր՝
պէտք է խրկել «Խուզակ»ի վարչութեան,
Բուսչոյ
Administration du Kousag Roustchouk

Պէտք չկարիոյ համար տարեկան 10 ֆր.
» » վեցամսեան 5 »
Օտար երկիրներու համար տարեկան 12 »
» » » վցմսյ. 6 »

ՀԻՆՔ ՕՐ ԳԵՐՍԱՆԻԱ

շաբ 5 քիւնի

Կայարանին մէջ գերմանական խիւտ
ու անգաւն լիզուի տիրապետութիւնը,
տափակ գլխարկով համադգեւտաւոր
պաշտօնեաներու խորխոտ, դարականի գի-
րքը (հոս երկաթուղիները Պետութեան
կը պատկանին) և միգաւտ ու ցուրտ
երկիրներու յատուկ հանգարտութեան
մը գոյութիւնը անմիջապէս մեղայա-
նեցին թէ կը գտնուինք «մարտիկնե-
րու» բուն լնակարանին սեմին վրայ-
նայց այս սեմը անցնելէ առաջ ջա-
նանք գոնէ ընդհանուր գիծերով ճանչ-
նալ այս երկիրը՝ որ կառուարուի Ալմա-
նական Կայսրութիւնը:

Զուիցերիայի գրեթէ տասներեք
անգամն է գերմանիա, որ առտիճանա-
բար կը խոնարհի դէպ ի Պալլիկ և
Հիւսիսային Ժովերը ու կը կազմէ վե-
րին, միջին և ստորին Ալմանիան: Առաջի-
նին մէջ կը բարձրանան ու հովիտներով
բաժնուելով կ'երկարին դէմ դէմի Վոփ-
լեռները, Սի անտառը, Սուապեան Ժիւ-
րան կամ Գերբուկ, Ալպը, Փրանքոն-
եան Ժիւրան, և Պաւլերիայի ու Փրան-
քոնիայի Լեռնադաշտը, ջրաշատ, բու-
սաւետ, հանգային, զանաջանագեղ,

ակնադարար, լերրի ամլոյ շուքեամբ
առնելով. երկրորդը կը գեղադարձեն
Թիւրինի ու Փրանքոնիայի խորին ան-
տառները և Հարձը, Լեռնախումբ մը
էրզայի ու Վեգերի մէջ տեղ, չափաւոր
հանգերով ու գիրքերու շանագանու-
թեամբ. երրորդը կամ վերջինը կը ձե-
ւացնէ խիւտ միօրինակ աւաղուտ, Լճա-
շատ, ճախճախուտ, անտառային, քիչ
շատ լարել երբայաւտան մը, «Գեր-
մանական դաշտ» կոչուած, որ կ'երթայ
կը խառնուի արեւելէն ուսականին
հետ և ախմուտքէն Հիւսիսականին
հետ: Գերմանիայի հարաւը կուտայ գի-
նի, ծխախոտ, վուշ, բուրդ, արմախք,
հմուլ կամ դայլուկ, աղուճակ, հանգա-
ծուխ, երկաթ, անգիրկ, և այլն. կեդ-
րոնը ծանօթ է մանաւանդ իր աղու-
ճակի, երկաթի ու ուրիշ մետաղի հան,
գերով, և հիւսիսը՝ գլխաւորաբար իր
ձիերով: Հարաւը ահմանուած է ճար-
տարարուեալ, գիրակեցիկ ու գոյժու-
գովուրդի մը լնակաւայրը բլրալու. կեդ-
րոնը՝ մետաղաւոր, մեղեհագործ և այ-
լն հարուստ անձերու իսկ հիւսիսը կը
մզէ իր լնակիչները անաւան ու ծով-
եան, նաւալնութեան, նաւարկութե-
ան, վաճառականութեան, ու «գինուոր-
ութեան» արշաւանգի, մանաւանդ այս
վերջին երկուքին, երբ արհեստագի-

տական տաղանդ ու ծանօթութիւնները կը պակսին: Կլիման լապտալար աւելի ցուրտ է, երկինք՝ միգամած, որոնք կը ստիպեն վառ պահելու կենդանի վառարանը շատ ուտելով ու շատ խմելով:

Այսպիսի կլիմայի մը տակ և ոչսպիսի յատկութիւններով օժտուած Հոնոուի, Իսթերի կամ Գանուլի, Վեոերի էլպայի ու օտերի հովիտներուն մէջ և շրջակաները կ'ապրէին ժողովուրդներ, որոնք եկած էին Արևելքէն կեկտական գաղթականութենէն վերջը և միայն էին Կեկտերը գէյօ ի աւելի արեւմուտ: Անոնք առաջին անգամ դիւնք ճանչցուցին յազապակիրթ հին աշխարհին իրենց արշաւանքներով — իրենց վայրագութեամբ, կոտորածներով, աւերումներով, տիրապետութեամբ: Այդ փուլ լուրդրները, կ'անուանուէին Ալէմաններ Թրանքներ, Պուրկաններ, Սիւէվներ (այսօր Պուապ) Կիմբրացիներ, Անկլներ, Տիւտոներ, Սալոններ, Լոմպարտացիներ, Վանտալներ, Մարքոմաններ և այլն: Այս բարբարոսները (թո՛ղ ներկին ձեռքի Գերմանացիները, որովհետեւ կ'ուզեմ որ անունները գործածուին այնպէս ինչպէս որ ճշմարիտ պատմութիւնը մեզ կ'աւանդէ) կը ճանչցուէին սովորաբար իրենց հաւակին մեծութենէն, որոնք կ'աղմէն, մաղերու առատութենէն ու երկարութենէն, վայրագ ու կոշտ բնաւորութենէն: Խոյս կուտային քաղաքներէն ու կը լնակէին ագարակներու մէջ: Կը նախաւիրէին ձկնորսութիւնը, որսորդութիւնը և մանաւանդ պատիրադմբ: Իրենց քաղաքական, բնկերական, կրօնական և այլն հաստատութիւնները գրեթէ անծանօթ են մեզմիտ յետ ցարհի յիտենք որ իւրաքանչիւր ցեղ ունէր սեռ մը, որուն պատշնր ժառանգական էր. ամբողջ ազգը կըլ աւելանար զանազան կարգի ա-

զատներէ և զանազան կարգի ստորակներէ, երբէք չերկներէ. իրենց զխառր աւտուածներն էին վատան ու Թրայա, որոնց կը նուիրէին ձիեր, արջար կամ յարեջուր:

Այս բարբարոսները, բռնի ճանչցուցին դիւնք իրենց արշաւանքներով: Առաջին անգամ երեցան Քրիստոսէ 110 տարի առաջ գրեթէ, Բրովանի և Բոի հովիտներուն մէջ: Մարիուի և ապա Կեկտերի տաղանդը ու աշարկու ճակատամարտները ստիպեցին դիւնք սպառել Հռովմի շէշ օրերուն: Մահաւոր Գ. Ե. գարեբուն, երբ իրինց հաւանքը արդիւր թաւը վերձաւ, տարածուեցան հիւսիս, արեւմուտ, հարաւ: Անկլները ու Սալոնները հաւատատուցան Բրիտանիա, Թրանքները՝ Գալլիա, Պուրկանները՝ Սապաւիա (այսօր Սաւոյա) ու արեւմտեան Հելուստիա, Ալէմանները՝ հիւսիսայի և արեւելեան Հելուստեան, Լոմպարտացիները՝ Իտալիա, Վանտալները՝ նախ Սոլանիա և ապա Արիլիէ: Առնց հին ցեղերու խառնուրդէն առաջ եկած է այսօրուան եւրոպական ազգերուն մեծ մասը:

Թրանքներու պետ Գրովիա, հիմնեց կայսրութիւն մը 481 ին, որուն մասը կ'աղմեց Գերմանիան: Բայց գիւրին չէր միշտ անձի տակ պահել անկախութեան սիրահար այս ցեղերը: մեծն Կարոլոս կամ Շարլմայն՝ կոտորածներով կամ պարզեական կալուածներով, այսինքն ոտնաճակով, ու կաշաքով հաղիւ հաղ կը պահէր իրեն իշխանութիւն առկա դանդ, և այն ալ ոչ լոյրովին: Պարզեական կալուածները մէկ հիմը գրին աւատականութեան եւ իրաւ, Շարլմայնի մահէն վեջ, ինչպէս այլուր, նոյնպէս Գերմանիա եղաւ ուրոյն և աւատական պետութիւն մը, անկախ 888 ին Արնուլֆի գահակալութեամբ, մին Շարլմայնի որդիներէն: Լուգովիլոս

Տղայով կը վերջանայ Կարոյանի հա-
րաւութիւնը: Ժ. դարուն սկիզբէն մին-
չե ԺԱ. դարուն սկիզբները տիրեց
Սալոնեան հարաւութիւնը, նշանաւոր
իր Օթոնեայ: Ասոր յաջորդող Ֆրան-
կոնեան հարաւութիւնը տեւեց մինչեւ
1138, ծանօթ «նեքոյութիւններու»
խնդիրներով և Հենրիկոս Գ. ին Գրի-
գոր պատրիարքի հետ ունեցած վեճերով:
Վերջը եկաւ Սուապեան հարաւութիւնը
որուն իշխանութեան ժամանակամիջոցը
կը կազմէ միջին դարուն մէջ Գերմա-
նական պատմութեան ամէնէն փառա-
ւորը: Կելթերու ու Կիպրիներու կռիւր
որ ծագում առաւ գահի յաջորդութեան
խնդիրէն, վերջը վերջը դարձաւ կու-
ւակցական կռիւ, կելթերը նկատուելով
կուակից պապութեան ու աղայի ան-
կախութեան, կիպրիները՝ կայսրու-
թեան աւատակա՛նութեան: Այս հակա-
յական պայքարը՝ որուն փառաւոր մղող-
ներէն մին և թերեւ ամէնէն նշանա-
ւորը եղաւ Ֆրետերիկ Ա. Շիկամորուս,
իրապէս տեւեց մէկ դար: Սուապեան
կայսրները ուղեցին իրենց բուն թշնա-
միէն վերջ յաղթել անուղղակի թշնա-
միներուն, նուաճելով իտալեան և խո-
նարհեցնելով պապութեան աշխարհա-
կան իշխանութիւնը:

ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ԵՒ ԻՐ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. Ասիոյի քննիչ և վերջ)

Ապրելու իրաւունքը բոլոր, որ նու-
րական իրաւունք մ'է, պարտի իր նուիրա-
գործութեամբ գտնել աշխատելու իրաւունքին
մէջ, ոչ թէ գոյնաւոր կամ սատարելու ի-
րաւունքին մէջ:

Միայն թէ ինչպէս կազմակերպել աշխա-
տելու այս իրաւունքը կամ աշխատութեամբ
ապրելու իրաւունքը:

Ստոյգ է որ այս օր, սովորական ատեն,
փոքրամասնութիւն մ'է որ կը նեղուի ան-
գործութենէն: Այս փոքրամասնութիւնը կը
մեծնայ անդադար, գիտենք, գործիներու
մէջ մայրուած փոփոխումներէն եւ մեքե-
նականութեան ծաւալումէն:

Աշխատելու իրաւունքը ապահովելու համար
պէտք է ջանալ միայն գործ հայթայթել չու-
նեցողներուն:

Այս է որ կը գործադրուի զանազան եր-
կերներու մէջ: Անգղիայի մէջ, օրինակի
համար, կան աղբասանոցներ (workhouses):
Հոն, մարդկային էակը ապահով է գտնելուն
բնակարան եւ ուտելիք, յաճախ խիստ ծանր
սահմանաւ աշխատանքի մը փոխարէն:

Գերմանիայի եւ Զուեցերիայի ինչ ինչ
քանիւսներուն մէջ կան աշխատանքի գա-
ղութներ (colonie), ուր զօրադր անգործները
կամ անոնք որ գործ չեն գտնել ո՛րեւէ տեղ
մը, կրնան գիտնել օգտակար ընծայել եւ
փոխարէն ընդունիլ ինչ որ պէտք է ապրե-
լու համար:

Պելճիգայի մէջ կը սկսին նմանօրինակ
կազմաւորութիւններ (organisme) հաս-
տատել: Բայց որովհետեւ աղբասանոցները՝
մասնաւոր նախաձեռնութեան գործն են, ո՛րեւէ
է ազգեցութիւն մը չունին եւ եւ պարտին
շատանալ քանի մը երկվեցեակ զօրադրնե-
րու զբաղում տալով:

Ասոնք ուրիշ բան չեն բայց եթէ փոփո-
քիչներ (palliatif) որոնք բան մը՝ չպիտի
փոխեն արդի դրութենէն:

Իարեւի էր ամենուն աշխատութիւն ա-
պահովել՝ արհեստաւորներու ընկերութիւն
ներու կամ սինտիկատութիւններու (syndicat)
կողմէ ստեղծուելով անգործներու համար
գործատուներ: Բայց ասոր համար պէտք
էր որ այս սինտիկատութիւնները լաւ կազ-
մակերպուած ըլլային: Յետոյ, գործը միշտ
գիւրին չէ բոլոր արուեստներուն համար:
Այսպէս, օրինակի համար, ինչ գործ ընել
պիտի տայնք անգործ տղաքիներուն:

Ապա, երբ անգործներուն թիւը մեծ է,
ուրիշ արհեստներու համար զօրաւորութիւն
պիտի ըլլայ քշելու արտադրութիւնները,
որովհետեւ անգործութիւնը կը գոյանայ մի-
այն հրապարակին վրայ եղած արտադրութիւն:

ներու յորդովենէ մը: Անդործներու գործա-
տունները ընդարձակելը յաճախ չեշտել պի-
տի ըլլար տագնապը:

Անդործութեան դէմ բոլոր քաղաքացի-
ներուն ապահովագրութիւն մը գո'նէ յորդ-
ութեան տագնապներուն դարման մ'է: Սա
միջոց մ'է անդործ մընացած գործաւորին
ապահովել զրամական միջոցներ, ապակելով
որ կարենայ նորէն գործ գտնել:

Բայց ընկերական տեսակէտով, դարմանը
յոռի է դեռ կամ մանաւանդ անբաւական:

Արդարեւ, պարագայ գործաւորներու գոյ-
ութիւնը զուտ վնաս մ'է ընկերութեան հա-
մար: Չգործածուած ամէն աշխատանքի ոյժ՝
կորսուած գործութիւն մ'է ուր ալ բնաւ
չպիտի գտնուի նորէն:

Դեռ ուրիշ միջոց մը կայ ամենուն ապա-
հովելու աշխատելու իրաւունքը, այսինքն
կանոնաւորել աշխատութեան աւելորդութիւնը
այնպիսի կերպով որ բոլոր գործաւորներուն
ապահովուի կանոնաւոր գործ մը:

Եթէ կան այս օր այնքան մարդիկ որ ա-
ռանց գործի են, պատճառն այն է որ անոնք
որ զբաղած են, չատ երկար կ'աշխատին ա-
մէն օր:

Օրական աշխատութեան տեւողութիւնը 8
ժամի թերեւս ինչ ինչ արուեստներու մէջ 6
ժամի վերածելը՝ միջոցը պիտի ըլլար ամե-
նուն ապահովելու աշխատելու իրաւունքը,
եւ իբրեւ տրամաբանական հետեւութիւն,
ապրելու իրաւունքը, որ անփոփոխ իրաւ-
ունք մ'է, զոր մէկը չպիտի համարձակեր
ուրանալ, տարակոյսի ենթարկել:

* * *

Մենք տեսանք որ ապրելու իրաւունքը
կ'ենթադրէ սերնմի՝ անհրաժեշտօրէն, աշխա-
տելու իրաւունքը:

Ճեսանք նմանապէս որ աշխատելու ի-
րաւունքը զժուար է իլականացնել եթէ
հաստատ պահեն արդի գրամատիրական դ-
րութիւնը ասոր հիմ կազմող կեանքի պայ-
քարով, ազատ մրցումով, տկարներուն զօ-
րաւորներէն ձմրումով, ինչ որ նոյն է աղքա-
ներուն հարուստներէն ջաջախումով:

Ինչ պէտք է ատկէ եղբակացնել:

Ճիշտ պարզապէս ասիկայ.

Ապրելու իրաւունքին իբրեւ անհրաժեշտ
հետեւութիւնն է աշխատելու իրաւունքը:

Եւ աշխատելու իրաւունքին իբրեւ տրա-

մաբանական հետեւութիւնն է դրամագլուխի
իրաւունքը:

Արդարեւ, եթէ դուք ունիք ապրելու ի-
րաւունք աշխատելով, արդարէ որ այս աշխա-
տութիւնը ձեզ ապահովուի ոչ թէ ո՛ր եւ է
մէկքանի անհատներէ այլ ընկերութենէն:

Եւ նա եւ պէք է որ կանոնաւոր աշխա-
տութեան մը փոխարէն դուք ստանաք ոչ թէ
ո՛ր եւ է թոշակ մը, անօթութենէն՝ չմեռնելու
չափ թոշակ մը, այլ ձեր դաժանքին ամբողջ
արդիւնքը որ թոյլ տայ ձեզ եւ ձեր ընտանի-
քին պատշաճօրէն ապրելու:

Աշխատութիւնը ոչ միայն իրաւունք մ'է
նաեւ պարտականութիւն մ'է: Ապրելու հա-
մար, պէտք է արտադրել, պէտքէ աշխատիլ:
Այն՝ որ չաշխատիր, բսաւ ՍաւրՊօղ ս, իրա-
ւունք չունի ուտելու:

Յայտնի է որ անոնք՝ որ կապրին առանց
աշխատելու, առանց օգտակար գործ ընելու՝
կապրին ուրիշներուն ծախքով, անոնց՝ ու-
րոնք կաշխատին: Դա անհրաւութիւն մ'է եւ
զեղծում մը, զորս ի օք քաղաքակրթեայ եւ
ազատ ընկերութիւն մը պէտք չէր որ թոյլ
տար:

Իր աշխատելու իրաւունքը բանեցնելու եւ
իր աշխատաւորի պարտականութիւնը կա-
տարելու համար, մարդս պէտք ունի ուրեմն
նախնական նիւթի եւ անհրաժեշտ գործի-
ներու: Այս է որ մենք կանոնանք դրամա-
գլուխի իրաւունք:

Դրամագլուխն է նախ բնական ազգակները
(ageat) հողը եւ տմէն ինչ որ նա կը պարու-
նակէ: Յետոյ անշարժ ստացւածները, մե-
քենաները եւ աշխատութեան գործիները:

Բնական ազգակ դրամագլուխը՝ որ կը
հոգայ բոլոր արհեստագործութիւններուն ան-
հրաժեշտ նախնական նիւթերը, բնութեան
մէկ ձրի պարզեւն է որ փոփոխուած է մար-
դուն աշխատութեամբ: Գործատուները, մե-
քենաները, աշխատութեան գործիները ընդ-
հանրապէս, հողէն առնուած եւ աշխատ-
ութեամբ փոփոխուած նիւթեր են դեռ:

Ուրեմն կեցող բոլոր գրամագլուխը՝ երէկ-
ուան աշխատութիւնն է, տաժանքի պտուղն
է մարդկային սերունդներուն որոնք մեզմէ
առաջ եղած են երկրագունդիս վրայ:

Դրամագլուխին ամէնուն ունեցած ի-
րաւունքը՝ կրկնակի արդար է ուրեմն. նախ,
իբրեւ տրամաբանական հետեւութիւն՝ ապ-
րելու իրաւունքին, ապա որովհետեւ գրամա-

Նույնը պտուղն է մեր հայրերուն զ/գած աշխատութեան, որոնց օրինաւոր ժառանգորդներն ենք ամենա:

Բայց ինչպէս պ/տի հասնին ամէն մարդկային էակի երաշխաւորելու սահմանափակ պատասխան իր ունեցած իրաւունքը, որպէս զի կտրին այն աշխատիլ եւ սպորտաւոր չան/լ: Միթէ ամեն մեկուն հեղի եւ գործ/նութուն ուղեւոր մաս մը սա/ով է: Ոչ զապարդ ի թօքի մ'է: Ահա աւարտ ի/ւր պիտի վերածնէր հետեւեալ օրը:

Դարեր առաջ, զեռ շողին չգտնուած, ի/ւր ս/ր աշխատութիւնը կը կատարէր ձեռքով հողին աշխատութիւնը ինչպէս ահա հասարակութիւնը, մալգ կ/ւար լմունի այս լուծումը իբրեւ գործադրելի: Բայց այս ր, այս լուծումը ա/կ կարելի չէ:

Մենք կապրինք մեծ արհեստագործական ժամակ/մը մէջ: Մեքեռականութիւնը, հազարաւոր մարդերու միեւ նոյն վարին վրայ միակ գործարանի մը մէջ կեդրոնացումը փոխելին աշխատութիւնը հաւաքականի՝ անհատականէն, ինչպէս որ էր երբեմն աշխատութիւնը:

Հաւաքական աշխատութիւնը իբրեւ հետեւեալ բնեցաւ աշխատութեան բաժանումը: Եթէ կարելի է եկ/լ ազդե/ն տալ հողի այն մասը որ իրեն հարկաւոր է ապրելու համար իրեն անհրաժեշտ եղածը արտադրելու, ճար չկայ նոյնը բնելու անհրաժեշտին համար, օրինակի համար մետաղագործին երկաթեղ/նելու պաշտօնային եւ գործաւորին համար եւ այլն:

Դրամագրութի իրաւունքը՝ մեծ արհեստագործութեան վիթխարի մեքենականութեան մեծաքանակ արտադրութեան այս ժամանակին մէջ՝ կրնայ ուրեմն կիրարկուիլ միայն աշխատողութեան միջոց ելուն ընկերակաշնացումով (socialisation)

Ուրիշ բաներով, ընկերութիւնը որ կընդունի բոլոր մարդկային էակներուն ապրելու իրաւունքը, անոնց սպարտի ապահովել աշխատելու իրաւունքը, եւ այս վերջի իրաւունքը կրնայ կիրարկուիլ միայն եթէ ընկերութիւնը իշխող տէրն է հողին եւ այն ամէնուն որ հարստութիւններու արտադրութեան կը ծառայէ:

Մէկ խօսքով, ընկերակարական լուծումը հարկ կ'ըլլայ, անգամ մ'ալ, եթէ մզէք տրամաբանական հետեւութեանը՝ բոլոր մար-

դերուն ընկերութեան մէջ ապրելու իրաւունքը:

* * *

Անտարակոյս կան, ինչպէս տեսանք վերը ուրիշ միջոցներ, նուազ արհատական, որ կարելի պիտի ընէին երաշխաւորել բոլոր քաղաքացիներուն ապրելու իրաւունքը եւ աշխատելու իրաւունքը: Միայն թէ ատոնք կիսատ միջոցներ են, անբաւական փոփոքիչներ, որոնց հիմը անկայուն է, եւ զորս տագնապի պարագային գծուար պիտի ըլլար երբեմն կիրարկել առաւել կամ նուազ ընդհանուր կերպով մը:

Եթէ մենք այս տեսակը գրեցինք, ցուցնելու համար է անգամ մ'ալ թէ ինչպէս գծուար է արդարութիւնը երաշխաւորել առանց գիտելու ընկերակարական, հաւաքական լուծումին, այսինքն թէ անհատական իրաւունքներուն տեղ հաւաքական, ամբողջ ընկերութեան իրաւունքները աստիճան արտադրութեան միջոցներուն վրայ:

Դր'ատոնեայ հանրապետականները՝ որոնք Պիլճիկայի մէջ քանի մը տարեներէ իվեր կըզբաղեն ընկերակարական խնդիրներով, ստիպուած են հաստատուել ինչ ինչ արդար ոկգրուեցներ, բայց անգամ մը այս սկզբունքները հաստատուելով, չեն կրնար ատոնց մէջ քաղել անխուսելի հետեւութիւնները առանց բաշխելու ընկերակարութեան, որուն գէմ կուզեն կոտիլ:

Բօթիէի, Ռէնքնի, Վերահասակէի պէս արբանիքը եւ ուրիշ քրիստոնեայ հանգաւարականներ ապրելու իրաւունքին բնաբանը ընդունել էւ պաշտպանել վերջը, չհամարձակեցան այս առաջին իրաւունքէն հանել տրամաբանական հետեւութիւնները աշխատելու իրաւունքը եւ դրամագրութի իրաւունքը, որոնք լաւ վերջաւորութեան տարուելու համար, իրենց կարգին կը պահանջեն հողին եւ արտադրութեան ուրիշ միջոցներու հաւաքական սեփականացումը:

Բայց որովհետեւ այս ապրելու իրաւունքը կը պահանջէր նոյն տանն նուիրագործում մը, յանգեցան այս անբարոյական, անհատատալի հետեւութեան գողնալու իրաւունքին:

Ճշմարիտ է որ պաշտպանելու համար իրենց բնաբանը, զոր մէկ քանի անիշխանականներ, Ռալֆալի նման, նմանապէս ըրած են իրենցինքն, կը կռթնին Սուրբ Թովմասի եւ ինչ ինչ եկեղեցական Հայրերու վրայ: Միայն

թէ, ինչպէս գիտել տուինք, բնաւ անգամ մը, դարէ մ' ի վեր որ պատժական օրինագիրքը խմբագրուած է, կաթողիկ մը չխնդրեց որ սեփականութիւնը պաշտպանող այս օրինագիրքին մէջ բացառութիւն ընեն անոնց համար որոնք կը գողնան չքաւորութեան պատճառով, անօթութենէ՝ չմեռնելու համար:

Ասկէ քանի մ' ամիսէն, այս հանրաշարական քրիստոնեաներէն շատերը հաւանականօրէն պիտի ըլլան օրէնսդիր ժողովի անդամներ: Պիտի տեսնենք ճիշտ այն ատեն թէ, չպարտաւորուելու համար հաւաքականութեան կիրարկութիւնը պահանջելու որ ապրելու իրաւունքը ամենուն ապահովելու միակ պարկեշտ եւ բարոյական միջոցն է պիտի ունենան գողնալու իրաւունքին պաշտպանները կանգնելու քաջութիւնը:

Հետաքրքրական տեսարան մը պիտի ըլլայ այս:

Ճեսանք որ այդ անկարելի է, առանց ընկերվարութիւն ընելու, առանց այս վարդապետութեան ճշտութիւնը եւ լաւ հիմնաորութիւնը ընդունելու, արդարացեալ ապրելու իրաւունքի այս միւս արդար սկզբունքը:

Եւ այսպէս է ուրիշ շատ մը բնաբաններու մասին զորս կը պաշտպանեն մեր քրիստոնեայ հանրաշարականները, որոնք իրենք զիրենք կը համարին հակընկերվարական:

Այսպէս, բանք վերջացնելով, արդարակազմութիւնը իրենց տեսականութիւնը անհամաձայն է վարպետի գրութեան հետ:

Գործաւորի մը թոշակը արդարակազմութիւն է միան եթէ ճշդիւ կը ներկայացնէ կատարուած աշխատութեան համարժէքը:

Թոշակը արդարակազմութիւն է միայն երբ գործաւորը կ'ընդունի իր աշխատելու ամբողջ արդիւնքը:

Արդ, ո՛վ է այն արուեստաւոր, ո՛վ է այն վարպետը որ պիտի հաւանէր գործ տալ բանւորներուն առանց հաւաստի ըլլալու թէ անոնց իւրաքանչիւրին պիտի քաղէ վաստակ մը թոշակին կարելու ձեւով գորպիտի գործադէր այս գործաւորներուն առաջ բերած զուտ արդիւնքին վրայ:

Գործաւոր մը կարողա՞րէ օրական աշխատութիւն մը, որ կը ներկայացնէ վեց ֆրանքի գրամական արժողութիւն մը: Վարպետը անոր համար կը վճարէ իրեն չորս ֆրանկ, այս թոշակը արդարակազմութիւն է:

Միթէ, « արդարակազմութեան » ին սկզբունքը նուիրագործելու համար, մեր քրիստոնեայ հանրաշարականները պիտի արտօնեն գործաւորին գողնալու ամէն օր, այս կամ այն ձեւին տակ, այն երկու ֆրանքը որ իրեն պակաս վճարած են:

Ասիկայ տրամաբանական պիտի ըլլար, միայն թէ խոստովանինք խոնարհաբար որ ապրելու իրաւունքը եւ արդարակազմութիւնը ուրիշ բան չեն բաց եթէ փխկնէր (blague) կաթողիկ գործաւորները խաբելու համար հնարուած:

Մայիս 1894

ԻՆՉ Է ՀՈԳԵՖԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴԵՐՈՒ ԵՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

(Շար · Ասխորդ քիւն)

Մէկ կողմէն դժուար է հաստատել թէ այն գոյութիւն ունի բոլոր այգման վայրերին ներու մէջ, քանի որ կան ցեղեր որոնց մէջ շատ դժուար է ո եւ է կրօնական զգացումի մը հետք գտնել. միւս կողմէն ընդունելով կրօնական զգացումներու իբրեւ հիմն անմշակ եւ տկար խելքերու համար բնութեան զանազան երեւոյթներու անհասկնալի ըլլալէն ծագած մէկ կողմէն վախը, միւս կողմէն զմայլումը եւ իբրեւ այդ երեւոյթները պատճառող ո՛րեւէ խորհրդաւոր կամ թանձրացեալ ուժի մը գաղափարը ու ասոր երկրպագութիւնը, շատերը մանաւանդ Տարուին, Ռոմինիս, Լըզուսո, կընդունին որ կրօնքներուն հիմը կարելի է գտնել նա եւ կենդանիներուն մէջ:

Աստուածաբան փիլիսոփաներու համար կրօնքը կը ներկայացնէ աշխարհ մը, ուր անհատներու յարաբերութիւնները որոշուած են իտէական գոյութեան մը կարգադրութեան համաձայն:

Այդ իտէական էակը պարունակելով անսահման բարութիւն, խելք եւ ոյժ, պարզ է որ անոր նախագծած կեանքն ալ բանաւոր բարոյական եւ անխուսափելի է: Բայց պարզ արտաբանութիւնը կը ցուցնէ որ նիւթական էակները չեն կրնար անսահման յատկութիւններ աւնենալ, ուստի այդ էակը՝ այդպիսի յատկութիւններով չկրնար նիւթական ըլլալ եւ կանուանաւր Աստուած:

Ի հարկէ՝ ամէն տնտեսական մասնաւոր բա-
ցատրութիւն մը տալ կրօնք բառին. բայց
գիտութիւնը զայն կը մէկնէ իրականութե-
ամբ: Եթէ մենք քննենք թէ ինչ է ե-
ղած կրօնքը ժամանակի ընթացքին մէջ, կը
տեսնենք որ սկիզբները անոր գոյութիւնը
մինչեւ անգամկանական է, իսկ առած ձեւը
կը ներկայացնէ աւետարանական կենդանապաշ-
տութիւնը, այնպէս որ մուկէն մինչեւ կո-
կորդիտները՝ անտուածներ են եղած, մինչ-
գեռ անոնք բոլորովին նիւթական արարած-
ներ են եւ անոնց յատկութիւնները՝ տեղի
քան սահմանափակ: Արդէն աւարտելով կը
բաւէ մեզ համար անուշադիր թողելու այդ
փիլիսոփայութեան տուած նշանակութիւնը:
Խօսելով բարոյականութեան մասին մենք
տեսնենք որ նա բոլորովին անկախ է ո՛ր եւ
է անսահման, աննիւթ էակի մը կարողա-
րութիւններէն:

Անատուններու եւ մարդերու մէջ եղած կրօ-
նական յարաբերութիւններու հարձք աւելի
բարդ է քան բարոյական ուրիշ ո՛ր եւ է հարձ:
Եթէ թիւի աւելումը մը ձգենք հասկնալու
թէ ինչ տարրեր, ինչ հոգեկան ընդունա-
կութիւններ գեր կը խաղան կրօնական գ-
զացումի արտադրութեան մէջ, կը տեսնենք
որ առաջին տեղը կը բռնեն զգայականութե-
թիւնները (illusion) բանգալու շանքներ
(hallucination) եւ վերջապէս երազասե-
սութիւնները: Այդ երեւոյթները առաջին
անգամ կ'ըստեղծեն վայրենի երեւակայու-
թեան մէջ հոգիներու գաղափարը: Մահը
անոր կողմէ կը նկատուի անվերջ քուն մը,
որուն միջոցին հոգին՝ ինչպէս երազի մէջ,
գեռ կապրի: Այդ հոգին ունի իր պէտքերը,
ինչպէս զէնք ուտելիք, հագնելիք, եւ մինչեւ
անգամ կին: Ահա ինչու համար մեռնողին հետ
կը թաղեն այդ բոլոր բաները: Եւ իսկապէս
կրօնական ծէսերուն ամէնէն առաջինը թա-
ղումի ծէսն է որ կը զարգանայ եւ շատ ան-
գամ մը կը կազմէ կրօնական զգացումնե-
րու միակ յայտարար նշանը:

Եթէ այժմ վերադառնանք կենդանիներ-
ուն, կը տեսնենք որ արդէն պարզ յատկու-
թիւնները կը տեսնուին անոնց մէջ թռչուն-
ներէն սկսելով: Չիին եւ սագին երազելով
բնաւ կառկածի չկրնար ենթարկուիլ. թէ
չունը ենթակայ է բանգալու շանքի եւ մա-
նաւանդ զգայականութեան, ինչպէս որ հաս-
տատուած է, բաւական է միայն յիշել թէ

ինչպէս շատ անգամ շուները յանկարծ սար-
տափած ետ կը փախչին պարապ միջոցէ մը
եւ կը պահուին կահերու տակ, եթէ սեն-
եակի մէջ են. կամ թէ ինչպէս կատուները
խաղալով իրենց ոտքին հետ քնքոյրէն կը
չփեն պարապ տարածութիւնը, կամ ճանկերով
կը յարձակին անոր վրայ: Այս վերջի գէպ-
քերը մեզ կրնան հասցնել մինչեւ կենդա-
նիներու մէջ քնածութեան (hypnotisme)
ներկայութիւնը:

Հիմնուելով այդ մասնաւոր յատկու-
թիւններու վրայ ենթադրելով է կայ կենդա-
նիներու մէջ գերբնականի զգացումը որ յա-
ռաջ կ'ուզայ այդ յատկութիւններէն ինչպէ-
որ կ'ենթադրէ Լըգուոնոն, շատ անհատա-
րի պիտի ըլլար, եթէ ուրիշ փառանք չյուշնէ
ին անկանականի կերպով որ այդ ամբողջ-
զգացումներու բաղադրութեանն անկախ,
գոյութիւն ունի կենդանիներու մէջ:

Արէնարը կրնալ որ կենդանիներ-
ուն կ'անքէն քանի մը փաստներ ամէնէն լաւ
կրնան բացատրել ֆէզիշութեան ծագումը
մարդերուն մէջ: Ֆէզիշութիւնը կը ծագի
վեղիշ բառէն որ կը նշանակէ, վէնոսի
նայելով, նիւթական իր մը, որուն կ'երկը-
պագեն վայրենիները ինչպէս կուռքերու:
Ահաւասիկ այդ փաստները:

Շուն մը կը խաղայ ոսկրի կտորի մը
հետ. պատահամբ գունջը կ'վերաւորէ այդ
ոսկրով. անմիջապէս թողնելով ոսկրը
կը հեռանայ որոշեալ միմոց մը հեռու եւ
կսկսի մոմուլ արտայայտելով վախ եւ սար-
ստի մ'որ նշանակութիւն ունի մեզ համար,
քանի որ մեզ յայտնի էր այդ շան վայրենի-
ութիւնը: Միայն երկար երթեւեկներէ եւ
զգուշութիւններէ վերջը կը համարձակի նո-
րէն մօտենալ ոսկրին: Շան այդ վարմուն-
քը պարզ ցոյց կուտայ որ քանի որ ոսկրը
չէր ցուցներ ո՛ր եւ է արտասովոր յատկու-
թիւն մը շան համար, նա անկէ չէր վախ-
նար, զայն կը համարէր անգոր: Բայց երբ
անակնկալ կերպով տեսաւ որ ոսկրը ոյժ
ունի եւ կրնայ առանց աշակցութեան վի-
րաւորել ու կեանքի նշոյլներ ցոյցտալ, նա
կը վախնայ, կը զարմանայ, իրեն անբացա-
արելի կը մնայ այդ երեւոյթը: Մէկ խօսքով
կը կատարուի միեւնոյն գործողութիւնը
ինչ որ կը կատարուի վայրենի մարդու
ուղիղին մէջ:

Ռօմենիս կը յիշէ հետեւեալ նմանօրի-

նակ փորձը: Յայտնի է թէ ինչպէս շուները ուրախութեամբ կ'իյնան ոսկրներու ետեւէ եւ կսկսին անոնց հետ խաղալ երբ մանաւանդ զանոնք ձգողն ալ տէրէրնին կըլլայ: Ռոմենիս ոսկրը ձգելէ առաջ կը կապէ զայն երկար թելի մը, որուն ծայրը կը պահէ ձեռքին մէջ: Շունը ուրախութեամբ կը վազէ, բայց զիս բոլորովին ոսկրին չմտեցած, Ռոմենիս կը քաշէ թելը, եւ այսպէսով կը հեռացնէ ոսկրը: Շան վարմունքը անմիջապէս կը փոխուի. նախ զարմանքով ետ ետ կը քաշուի, ապա տեսնելով որ արտասովոր երեւոյթը կը շարունակուի զարմա՛նք կը փոխէ սարսափի եւ կը փախչի այդ կենդանացած ոսկրէն թէ եւ ոչ բոլորովին: Այսպիսի գէպերու թիւը կարելի է կրկնապատկել: Ինչպէս կը տեսնէք, գիտ հոս բուն ֆէզիշութիւն չկայ. շունը չսկսեր յաւէտ երկրպագել ոսկրին եւ անկէ վախ՛նալ: Այս փաստերը մեզ թոյլ կուտան միայն ենթադրել որ գերբնականի զգացումը գոյութիւն ունի կենդանիներու մէջ:

Եթէ այժմ մէկ կողմ թողունք կրօնքի մասին եղած վերացական տեսութիւնները եւ դիմենք կրօնական զգացումի հետ կազմաւորապէս կապուած մեր կազմուածքի արտաքին արտայայտութիւններու ուսումնասիրութեան, առնելով մարդը իրրեւ ուսումնասիրութեան առարկայ, մենք կը տեսնենք թէ ո՛րքան այդ արտայայտութիւնները կը նմանին կենդանիներու մէջ գիտուած համանման արտայայտութիւններուն: Այս մասին կը գտնենք Ռիպօի «զգացումներու հոգեբանութիւն» անունով գործին մէջ հետեւեալը, զոր ամփոփելով կը ներկայացնենք: Ամէնէ առաջ. մենք կը նշմարենք վախի յուզումը իր զանազան աստիճաններով. սկսելով սարսափէն մինչեւ անորոշ անհանգստութիւն մը զոր պատճառած է էակ մը, գերբնային ան ըմբռնելի, ոյժ մ՝ որ կրանայ մեզ օգտակար ըլլալ եւ ա՛լ աւելի վնասակար. (պտմական իրողութիւն մ'է որ ընկերութեան ծագումի ատենները աւելի շատ կը պաշտէին չար ոգիները քան թէ բարիները): Ուրիշ բնորոշ կէտ մը կը գտնենք այն համակրանքին մէջ զոր հաւատացողը կզգայ իր Աստուածին մասին: Թէ եւ վախը սովորափար կ'ենթադրէ փախչիլ ահարկու առարկայէն, բայց երբ առարկան գերբնական ուերով է գիտուած, փախուստը կը դառնայ ան-

կարելի եւ հաւատացեալը կը սկսի մօտենալ իր Աստուծին, զայն փաղափշել խիղճը շարժել եւ ողորմածութիւնը գրաւել իր վրայ: Այդ համակրական ձգտումը շատ քիչ զարգացած սկիզբի ատեններու կը դառնայ զարգացումի բարձր աստիճաններուն մէջ կրօնքի ամէնէն նշանաւոր մասը:

Երրորդ կէտը որ առաջ կուգայ միւս երկուքէն, կը կայանայ անոր մէջ որ կրօնական զգացումը բուն իսկ անձնասիրական, շահասիրական զգացում մ'է. ամէնէն անձուկ անձնամոլութեան արտայայտութիւնն է նա, այսինքն ինքնապաշտպանութեան նա զէնք մ'է կեանքի կռիւին, մէջ: Շահասիրական բնաւորութիւնը պարզ կ'ըրեւայ այն բոլոր ծէսերէն որոնք հիմնուած են «do ut des» կուտամ սրպէս զի տաս ի վրայ: Այդ կէտէն քայլ մը կը մնայ գէպի նախարարութիւնները, զոհաբերութիւնները որոնք հաճախուած են ասոր որ պարտական են վարձատրել հաւատացեալը:

Մենք կը կարծենք որ նմանութիւնը այնքան խոշոր է այդ երկու շարք երեւոյթներուն մէջ որ բացատրութիւն տալը աւելորդ է: Միւս կողմէն, գիտնալով որ վերջին ծաւր վայրենիներու մէջ կրօնական զգացումը այդ աստիճանէն անդին չանցնիր: հարձը կարելի է գրեթէ վճռուած նկատել ընդունելով որ ինչպէս մտաւոր եւ բարոյական ասպարէզներու մէջ նոյնպէս ալ կրօնական զգացումի զարգացման ասպարէզին մէջ բնութեան զանազանութիւն չենք գտներ մարդերու եւ անասուններու միջեւ:

Եւ Մ. . . . եանց

Թերթիս Վառնայէն Բուսչուք տեղափոխութիւնը ժամանակի կորուստ եւ դժուարութիւն պատճառելով, չը կարողացանք 5-րդ թիւը իր ժամանակին հրատարակել, եւ այս կերպով մէկ ամիսի մէջ փոխանակ երկուքի՝ միայն մէկ թերթ երեւան եկաւ. այս կորուստը սակայն պիտի ձեռք բերենք ուրիշ ամիսի մը մէջ երեք թիւ տալով մեր ընթերցողներուն:

Отговорникъ Д. Кодаровъ.